45

№ 237 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 7 ՆՈՅԵՄԲԵՐԻ

1917
ՔԱՌԱՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 7 ՆՈՅԵՄԲԵՐԻ № 237

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների
համար ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ այլևս
ՉԻ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 20 ԿՈՊ.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տելէֆօն № 2—53

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են՝ Կովկասում իւրաքանչիւր տողատեղին 30—20 կոպ., Կովկասից դուրս՝ 40—30 կոպ.։

Հասցէն փոխելու համար պէտք ուղարկել թէ հին հասցէն և թէ 50 կոպ.

„ՄՇԱԿԻ" գրասենեակի կողմից
ՆՈՅԵՄԲԵՐ և ԴԵԿՏԵՄԲԵՐ ամիսների համար
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՅԼ ԵՒՍ
ՉԻ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱ

Երկուշաբթի, նոյեմբերի 6-ին, Պարէնաւորման Վարչութիւնը կը սկսէ բաժանել եղած սահմանափակ քանակութեամբ մանուֆակտուրան, և միենոյն ժամանակ միջոցներ է ձեռք առնում ապահովելու ապագայում ազգաբնակութիւնը մանուֆակտուրային ապրանքներով։ Մանուֆակտուրան ստանալիս անհրաժեշտ է կարգապահութեան վրա խիստ հսկողութիւն կատարել և Վարչութեան յիշատակած օրէնքները խստութեամբ պահել։

Առանց այս պայմանների մանուֆակտուրայի ուղիղ և արդարացի բաժանումը աննպատակայարմար է։

Մանուֆակտուրան կարելի է ստանալ միմիայն ժամանակաւոր Պարէնաւորման քարտով։

Քաղաքացիներ և ընկեր զինուորներ, հերթաշարքերում տեղ մի գրաւէք. եթէ դուք չունէք քարտեր, յայտնեցէք ձեր ընտանիքի տղամարդկանց, կանանց, երեխաների իսկական թիւը։

Ընկեր զինուորներ, մի կազմէք յատուկ «զինուորական» հերթաշարեր. այդպիսի երևոյթը բոլորովին անթոյլատրելի է։

Մանուֆակտուրա ստանալու օրէնքները

1) Մանուֆակտուրային ապրանքներ առնելու համար անհրաժեշտ է ցանկացած մանուֆակտուրային խանութին ներկայացնել ժամանակաւոր Պարէնաւորման քարտը, և յատուկ բլանկում նշանակել իր իսկ ստորագրութեամբ ընտանիքի կազմի մասին, հետևեալ ձևով.

ա) Տղամարդկանց թիւը
բ) Կանանց »
գ) Երեխաների (մինչև 14 տարեկ.) թիւը։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.—Այդ տեղեկութեան բլանկները կը տրվեն խանութներում մանուֆակտուրան գնելիս։

2) Քարտով կը տրվի ինչպէս սպիտակեղէն (կտաւ), այնպէս և բամբակեայ, բրդէ, մետաքսէ (հագուստի) և ձմեռվայ տաք հագուստեղէնի կտորներ։

3) Ընտանիքի իւրաքանչիւր անդամի համար կարելի է գնել. բամբակէ (հագուստի համար), բրդէ կամ մետաքսէ գործուածքներ, վերարկուի համար տաք հագուստ (բրդէ կամ կիսաբրդէ բամբակախառն)։ Սպիտակեղէնի համար բամբակէ կամ կտաւէ գործուածքներ։

4) Հագուստի համար կարելի է գնել կամ միատեսակ ապրանք (բրդէ, բամբակէ գործուածք կամ մետաքսէ), կամ խառն, ինչպէս շրջազգեստի կամ անդրավարտիքի բրդէ, պինջակի համար բրդէ-բամբակէ գործուածք։

5) Մանուֆակտուրան բաց կը թողնվի հետևեալ նորմայով։

	Տղամարդկանց համար,	կանանց համար,	երեխան. մինչև 1 տարեկան
սպիտակեղէն	7 արշ.	12 արշ.	1 արշ.
կտաւէ (բրդէ)	»	»	»
մետաքսէ	»	»	»
և բամբակէ	4½ (երկտակ) արշ.	12 արշ. (միտակ)	4 արշ.

Տղամարդկանց, կանանց, երեխաների համար մինչև 1 տար. ձմերային տաք հագուստի համար (վերարկուի համար) 3 և կէս արշ. (երկտակ), 4 և կէս (երկտակ) արշ., 2 արշ. (երկտակ)։

6) Մանուֆակտուրայի գները խիստ որոշված են։ Ապրանքի իւրաքանչիւր կտորի վրա կոմիտէի կնիք կայ և եարլիկը (ապրանքագրոշմը), որի վրա նշանակված է գինը։

1917 թ. նոյեմբերի 1 ին — Քաղաքային Պարէնաւորիչ Վարչութիւն
առ. 1332 3—3

„ՄՇԱԿ" լրագրի համար հարկաւոր է
ՄԻ ՀՄՈՒՏ
ԳՐԱՇԱՐ
300 րուբլի ռոճիկով
Դիմել «ԷԿՕՆՕՄԻԱ» տպարան՝ Большая-Ванкская 3.

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆԻ
(I հատոր Ա—Ն)
կազմած, գունաւոր շապիկով 2280 էջ. 11,263 անուն և 308 պատկեր։
Գինն է ճանապարհածախսով 7 ր.։
Գրավաճառների և արտասահմանի համա 10 րուբլի։
Դիմել՝ Թիֆլիս, «Մշակի» խմբագրութեան Հ. Առաքելեանին։
Վերագիր վճարով պատուէր ամենևին չէ ընդունվում։
առ. 0—4

Երևանի ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ
համար հրաւիրվում է ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ մասնագէտ
ՈՒՍՈՒՑԻՉ
20 դասով։ Պայմանների մասին տեղեկանալ հեռագրով դպրոցի Հոգաբարձութիւնից։
առ. 1334 3—3

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Գ. ԿԷՕՆՋԵԱՆ
Պլոմբ, ընդերքի բժշկ., արհեստ. ատամներ, կարօնկաներ ոսկուց և պլատինից, ոսկեայ կամուրջներ կատարելագործված մեթօդով։
Ընդուն. ամեն օր, բացի կիրակի օրերից առ. 10—1 ժ., երեկ. 4—7 ժ.։
Лермонтовская ул. № 1. մուտքը պէրէուլօկից։
(ե. հ. կ.) առ. 1086 0—39

ԲԺԻՇԿ
Ա. Յ. ԵՐԻՑԵԱՆ
Ընդունում է վեներական, միզասեռական և մորթու հիւ.։ Բուժումն սիֆիլիսի 914-ով և 606-ով, սեռական խանգարման—էլեկտրականութեամբ և այլ միջոցներով։
Ընդունելութիւնը երեկ. ժ. 5—8-ը, բացի կիրակի օրերից։
Նիկօլաևսկայա փ. № 52, երկրորդ յարկ։
առ. 1259 100—15

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

յայտարարում է, որ միջնակարգ դպրոցներում Թիֆլիսում ծնվածների համար բացվել են քաղաքային հետևեալ ստիպենդիաները.

1) Արքալեամովի անունով. 5 րդ տղայոց գիմնազիոնում և Րէալական դպրոցում մի-մի հայի համար.

2) [illegible] Րէալական դպրոցում մի տեղ հայի համար, Րէալական դպրոցում և 5 րդ տղայոց գիմնազիոնում մի-մի վրացու համար.

3) Պուշկինի անունով. 5-րդ տղայոց գիմնազիոնում մի տեղ՝ վերջացրած տարրական դպրոցը և որը պահվում էր քաղաքի միջոցներով առանց ազգի խտրութեան։

5) Զնքէյզովի անունով. 4-րդ տղայոց գիմնազիայում, մի տեղ մամուլի աշխատաւորների երեխաների համար։

6) Մի թոշակաւոր քաղաքի անունով. I ին աղջկանց գիմնազիոնում առանց ազգի խտրութեան։

Խնդիրները, որոնց պէտք կցված լինեն ծննդական վկայականներ և գիմնազիոնի վկայականը (удостовѣреніе), ընդունվում են Քաղաքային Վարչութեան դպրոցական բաժանմունքում (Սերգէևսկայա փ. № 4) մինչև 1917 թ-ի նոյեմբերի 15-ը։
առ. 1343 1—1

ԲԺԻՇԿ
Շուշանիկ Նարարեան
Վերադառնալով հանքային ջրերից, վերսկսում է հիւանդների ընդունելութիւնը կանանց հիւանդութիւնների և մանկաբարձութեան մասնագէտ։ Ընդունելութիւնը ամեն օր ցերեկվայ ժամը 1½—3½-ը։
Սօլօլակ, Բոլնիչնսկայա փող. № 1.
Հեռախօս 6—80.
առ. (կ. ե. ու.) 1342 50—1

ԲԺԻՇԿ
ԱՆՏԻՕԽ
Ներքին հիւանդութիւններ, նաև ականջի, կոկորդի, քթի, և աչքի հիւանդութիւններ։
Ընդունելութիւնը լի օրերը առ. ժ. 11—12-ը և 5—7-ը երեկոյեան։
ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ ՁՐԻ
Բէհբուտովսկայա [illegible] № 26.
առ. 1286 50—10

ԲԺԻՇԿ
Վ. ԽԱՉԱՏՐԵԱՆՑ
Ներքին և ջղային հիւանդութիւնների։
Ընդունելութիւնը եր. ժ. 5—7
Հասցէ՝ Вознесенск. ул. № 8.
առ. 1314 100—5

ԲԺԻՇԿ
Վ. ԱՐԾՐՈՒՆԻ
Վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը
Ականջի, քթի և կոկորդի հիւ.
Ամէն օր, բացի կիրակի
Առաւօտ. 11—1 ժ., երեկ. 6—7 ժ.
Հիւանդների թիւը սահմանափակված է։
Бебутовская ул. 26., երրորդ օրիորդաց գիմնազիայի կողքին։
(ե. հ. կ.) առ. 1238. 50—10

ԴՐՈՒԹԻՒՆԸ ՊԵՏՐՈԳՐԱԴՈՒՄ

Պետրոգրադում դրութիւնը մի քիչ պարզվել է. գոնէ այժմ յայտնի է, որ Ժամ. Կառավարութիւնը տապալված է. և տապալված է, որովհետև նա վերջերս բոլորովին վստահութիւն չէ եղել վայելում բոլորի կողմից, և բոլշևիկները կազմել են միապաղաղ, միատարր բոլշևիկեան կառավարութիւն, որին տուել են «Ժողովրդական կոմիսարների խորհուրդ» անունը։ Այդ խորհրդի կամ նոր կառավարութեան նախագահը, բնականաբար, կարգվել է Լենինը։ Խորհրդի կազմը առաջ ենք բերում այսօրվայ «Մշակի» մէջ։

Ի հարկէ դեռ անորոշ է թէ ում՝ արդեօք այդ նոր կառավարութիւնը ճանաչվում է ուժեղների կողմից, թէ միայն թղթի վրա է։ Բայց յամենայն դէպս նա դեկրետներ է հրատարա[illegible] Լենինը, [illegible] նախագահ, հրատարակել է հրովարտակ, որով յայտնում է, թէ Հիմնադիր Ժողովի ընտրութիւնները անպատճառ պէտք է կայանան նոյեմբերի 12-ին։

Սակայն կան տեղեկութիւններ, որոնք ցոյց են տալիս, որ կառավարչական պետական հաստատութիւնները հրաժարվում են ճանաչել Լենին-Տրօցկիի նոր կառավարութիւնը և բոլոր պաշտօնեաները սպառնում են գործադուլ անել կամ չը ստանձնել իրանց պաշտօնը, եթէ նոր կոմիսարները գան հաստատութիւնների գլուխ անցնել։ Այսպէս, օրինակ, երբ Տրօցկին եկել է արտաքին գործերի մինիստրութիւնը և յայտնել, որ այժմ ինքն է արտաքին գործերի մինիստրը, պաշտօնեաները անմիջապէս հեռացել են և գնացել են իրանց տները։ Երբ նոր կառավարութիւնը կամեցել է վերահրատարակել Ժամ. Կառավարութեան թերթը, գրաշարները և միւս պաշտօնեաները որոշել են չաշխատել։ Նոյնը և երկաթուղային միութեան համառուսական կոմիտէն որոշել է չը հնազանդվել նոր կառավարութեան և գործադուլ անել, իբրև բողոք բոլշևիկների յափշտակութեան դէմ։ Եւ առ հասարակ բոլոր մինիստրութիւնների մէջ պաշտօնեաները բողոքի որոշում են կայացրել բոլշևիկների կողմից իշխանութիւնը գրաւելու և «ժողովրդական կոմիսարներ» նշանակելու դէմ։

Հետևաբար՝ բոլշևիկները դեռ մեծ ջանքեր պէտք է գործ դնեն կամ շատ արիւն թափեն և թափել տան՝ մինչև որ երկիրը ճանաչէ նրանց իշխանութիւնը, իբրև օրինական կառավարութիւն։

Բոլշևիկները, իբրև ռուսական պրօլետարիատի ամենածայրայեղ ձախակողմեան մասը, ինչպէս գիտենք, ձգտում են հիմնել Ռուսաստանում դիկտատուրա և ստեղծել սօցիալիստական կառավարութիւն, մի բան, որ քաղաքակիրթ Եւրոպան և Ամերիկան մինչև այսօր չը կարողացան իրագործել։ Դեռ աշխարհումս ոչ մի տեղ, նոյն իսկ այն երկիրներում, որոնց ժողովուրդների 100 տոկոսը գրագէտ են, սօցիալիստական յեղափոխութեան գաղափարը չէ իրագործված, իսկ բոլշևիկները կամենում են իրագործել այդ գաղափարը Ռուսաստանում, որի ազգաբնակութեան 80%-ը դեռ անգրագէտ է և ուր պրօլետարիատը կազմում է ընդամենը 4 միլիոն ժողովուրդ, մինչ մնացած 166 միլիոն ժողովուրդը, ինչպէս շատ ճիշդ նկատում է ռուսական մի թերթ (որի յօդուածը քաղուածօրէն առաջ ենք բերում «Մշակի» այսօրվայ համարի Մամուլի բաժնում), սնված և մեծացած է [illegible] կամ տնտեսութեան գաղափարով։

Ի հարկէ, ուրիշ երկիրներում էլ փորձեր եղել են, դեռ Ֆրանսիական մեծ յեղափոխութիւնից ի վեր, հաստատել սօցիալիստական կարգ ու կանոն, այն է իրագործել Կարլ-Մարքսի թէօրիան, բայց բոլոր այդ փորձերը անյաջող են անցել։ Նա անյաջող կանցնի և Ռուսաստանում, ուր կապիտալիզմը դեռ չէ հասել իր զարգացման գերագոյն աստիճանին, իսկ դա անհրաժեշտ պայման է սօցիալիստական յեղափոխութեան համար։

Չենք կարծում, որ բոլշևիկների աջողութիւնը տևական լինի։

Բայց եթէ բոլշևիկները կարողանան կայացնել Հիմնադիր Ժողովը, ինչպէս խոստանում են, դա նրանց կողմից մեծ ծառայութիւն կը լինի, որովհետև այսօր միակ ելքը ստեղծված անտանելի դրութիւնից ազատվելու՝ Հիմնադիր Ժողովն է, որ լաւ թէ վատ, իբրև ռուս ժողովրդի կամքի արտայայտիչ, վերջնական վճիռը կարտասանէ։

Հ. Ա.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԱՒԱՌԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

> Alles war gesagt
> Doch alles bleibt zu sagen.
> Göthe

XXVI

Ես շատ սիրում եմ Արարատեան դաշտը, ուր հորիզոնը այնչափ նեղ է և այնչափ գրաւիչ։ Երբեմն, երբ ես տրամադիր եմ լինում դառնալու դէպի հեռուն, դէպի վաղեմի, անցած գնացած օրերը, իմ առաջ, որպէս մի խորունկ յիշողութիւն, կանգնում են Մասիսը, Արաքսը և այն անհուն տարածութիւնը, ուր միշտ թափառել են մեր տենչանքները։ Եւ եթէ Արարատեան դաշտը, Արցախ, Գողթան, միացած Արաքսով, կազմում են այն ցիկլը, շրջանը, ուր մեր Լեռան՝ Արաքսը, «յորձանք տալով [illegible]», վերապահել է իրեն ազգային զգացումների և խղճերի տիրապետութեան տրամադրութիւնը, այդ «յորձանքների» եզերքներում նոյնպէս վարպետօրէն անդրադառնալու գաղտնիքը Արարատեան դաշտի դիցուհին հաւատացել է Աւետիս Ահարոնեանին... Արձագանք տալով մեր երկրի վերջին տարիների տրամադրութեանը, Ահարոնեան այնպէս շոյեց մեր ճաշակը և այնպէս ուժգին տրամադրեց մեզ հոգալու և սիրելու Արարատի ստորոտները, Բագրևանդը և դէպի այն կողմը տարածվող կապուտակ հեռուն։

Մեր երկուսիս մեծ և հինաւուրց բարեկամ Հմայեակ վարդապետ Արշարունին, Արարատեան դաշտի և աստուածային լեռների ոչ պակաս սիրահարը, երբեմն ասել է մեզ, որ ոչ մի տեղ և ոչ մի ժամանակ լուսինը այնպէս գեղեցիկ և այնպէս հմայուն չի եղել, ինչպէս այնտեղ՝ Սուրմալու Էջմիածին... Եւ նա երկար պատմել է մեզ, թէ ինչպէս այդ լուսնկայ գիշերներում սրբագործվում և որոշ կերպարանք է ստանում բարին և գեղեցիկը և թէ ինչպէս այդ կաթնանման գիշերային կախարդութեան մէջ առաջ են գալիս մտքերը և բարձր գաղափարները... Եւ այժմ, աւելի քան երեսուն տարի անցնելուց յետոյ, ես, որպէս մի երազ, մտաբերում և բացատրում եմ, թէ ինչպէս և ինչու առաջ եկաւ Ահարոնեանի գեղեցիկ և օրհնեալ լեզուն, մի լեզու, որ անվերջ սահում, անվերջ գուրգուրում է ձեր լսողութիւնը և տիրապետելով ձեր ճաշակը՝ տանում է ինձ և ձեզ, ընթերցող, իր հետից... Այդ ժամանակամիջոցներում խմորվում էին այն անցքերը, որոնք յայտնի կերպարանք ստացան միայն մեր օրերում, և Ահարոնեան արձակ ոտանաւորով, որպէս արտայայտիչ ժողովրդական իղձերի և հասարակական ճաշակի, շատ աջող և մեծ վարպետութեամբ երգեց մեր տրամադրութիւնը, մեր ժամանակը, մեր վիշտը...

Բայց անհասանելի է ճակատագրական տարածութիւնը. և երբ Թումանեան այնպէս յուզիչ օրօրում էր մեզ «Ժայռերը խորունկ նօթերը կրած...» և մենք այնպէս տրամադիր էինք անվերջ ճախրել և նրա հետ միասին երազել, կեանքի ծալքերում խմորվում էին այլ դէմքեր և դրական այլ պահանջներ, որոնք ձևակերպելով ժամանակի հոսանքութիւնը՝ տարածում էին մեր առաջ այլ հորիզոն և այլ տրամադրութիւն... Փոխվում են կեանքի պայմանները, ամենուրեք զգացվում է մշտական բողոքը, «ոսկէ իրաւունք է» լսվում է մի անորոշ ձայն, քաղաքը դառնում է այն հուրը, ուր դարբնվում էր անողոք իրականութիւնը և մեր դարաշրջանի այդ կենդանի գոլորշայի դռները բացւում և առաջնորդում է մեզ իրականութեան այդ՝ անհունի լաբիրինթը մի այլ խոշոր կարող, մեր մեծահռչակ հոգեբան Շիրվանզադէն... Եւ այդտեղ, կարծես, կեանքը կանգ է առնում, իդէալիզմը, Թումանեան - Յովհաննիսեանի մեղեդին, որպէս նուրբական յիշողութիւն, անցնում է դէպի մեր կեանքի գարունը, և Շիրվանզադէն, կատարելապէս տիրապետելով ամենամաստ իրականութիւնը, ստիպում է ձեզ խոնարհվել կեանքի անողոք պահանջների առաջ, և դուք հլու և սրտատրոփ գնում էք «Պատուի համար» հեղինակի ետևից։

Կանցնեն շատ երկար տարիներ, կը մոռացվի մեր ժամանակների էլէգիան.

«Ո՛հ, ինչ անուշ և ինչպէս զով
Առաւօտուց փչես, հովիկ,
Ծաղկանց վրայ գուրգուրելով
Եւ մաղերուն կուսին փափկիկ։

Կանցնեն, կը գնան դարեր հետ միա-

Հայ Փախստ. Կազմակերպութիւնների Գլխաւոր
ԽՈՐՀՐԴԻՆ
Կարելի է դիմել այս հասցէով Թիֆլիս, Սօլօլակսկի փող. № 9.
Ռուսերէն՝ Тифлисъ, Главному Совѣту объединенныхъ Армянскихъ Бѣженскихъ Оргонизацiи.
Հեռագրական հասցէն այսպէս է՝ Тифлисъ «Соварбѣж».
տա. 1346 2—1

„ՄՇԱԿԻ"
ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Թաւրիզ, 2 նոյեմբերի

Ջիվանշիրի գաւառում անիշխանութիւնը հասել է անօրինակ սահմանների. ամեն քայլ աւազակութիւններ, թալաններ և սպանութիւններ են կատարվում առանց ազգութեան խտրութեան. երկիրը քայքայվում է, կործանվում է. խմբերով ճանապարհորդելը առանց զինւորման անհնարին է. 31 տանտէրեր կողոպտվել են։ Եթէ անմիջապէս միջոցներ ձեռք չառնվեն զինւորական մասերի, արտիլլերիայի կողմից, անկարելի կը լինի դադարեցնել կործանարար անարխիան. գաւառում գտնված կօզակները բոլորովին չեն գործում։

Ասքանազ Տէր-Սիմէօնեանց

—

Գործող բանակ, 5 նոյեմբ.

Ամեն օր փախստականների ահագին բազմութիւն է հաւաքվում պարենաւորման պահեստի առաջ, որ պահանջում է ալիւր։ Շրջանում զգացվում է սով փախստականների շրջանում։ Անհրաժեշտ է շուտափոյթ օգնութիւն քաղցած մարդկանց։ Այսպիսի անելանելի դրութիւնը ստիպում է նրանց նորից դաղթելու հայրենի օջախից։

Մարգարեան

ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Բանւ., զին. և գիւղացիական պատգամաւորների համառուսական խորհուրդների համագումարը որոշեց.

— Մինչև Հիմնադիր ժողովի գումարումը երկիրը կառավարելու համար կազմել ժամանակաւոր բանւորական և գիւղացիական կառավարութիւն, որը կոչվելու է ժողովրդական կոմիսարների խորհուրդ։ Պետական կեանքի առանձին շրջանների կառավարչութիւնը յանձնվում է յանձնաժողովների, որոնց կազմը պէտք է իրականացնի համագումարի ընդունած ծրագիրը, բանւորների, բանւորուհիների, նաւաստիների, զինւորների, գիւղացիների և ծառայողների կազմակերպութիւնների սերտ գործակցութեամբ։ Կառավարական իշխանութիւնը պատկանում է այդ յանձնաժողովների նախագահների խմբին։

Ժողովրդական կոմիսարների գործունէութեան հսկողութիւնը և նրանց փոխելու իրաւունքը պատկանում է բան., գիւղ. և զին. պատգ. խորհրդի համագումարին և նրա կենտրոնական գործադիր կոմիտէին։

Ներկայումս ժողովրդական կոմիսարների խորհուրդը կազմվում է հետևեալ անձերից։

Խորհրդի նախագահ է ընտրվում՝ Վլադիմիր Ուլիանով (Լէնին)։

Ներքին գործերի ժողովրդական կոմիսար՝ Ա. Ի. Ռիկով։

Երկրագործութեան՝ Վ. Պ. Միլիւտին։

Աշխատանքի՝ Ա. Գ. Շլեապնիկով։

Զինւորական և ծովային գործերի կոմիտէների մէջ մտնում են Վ. Ա. Ավսէենկօ (Անտօնով), Ն. Վ. Կրիլենկօ և Ֆ. Մ. Դիբենկօ։

Առևտրի և արդիւնաբերութեան՝ Վ. Պ. Նօգին։

Ժող. լուսաւորութեան՝ Ա. Վ. Լունաչարսկի։

Ֆինանսների՝ Ն. Ի. Սկվորցով (Ստեպանով)։

Արտաքին գործերի՝ Լ. Դ. Բրօնշտէյն (Տրօցկի)։

Արդարադատութեան՝ Գ. Ի. Օպպօկով (Լօմով)։

Պարէնաւորման՝ Ի. Ա. Թէօդորովիչ։

Փոստ և հեռագրութեան՝ Ն. Պ. Ավիլօվ (Գլէբօվ)։

Ազգային գործերի նախագահ՝ Ի. Վ. Ջուգաշվիլի (Ստալին)։

Երկաթուղային գործերի կոմիսարի պաշտօնը ժամանակաւորապէս թափուր է։

սին, իսկ մեր Զօլա-Շիրվանզադէն կը մնայ պատմութեան ծալքերում իր դէմքերով և իր բնական իրականութեամբ որպէս մի մեծ բեկոր պատմութեան, ուր կեանքը կանգ է առել իր ընթացքի բնական հետքերը թողնելու համար...

Եւ երբ մեր մտքերի և զգացումների շնորհալի դէմքերը այնպէս վարպետօրէն և այնպէս հմայիչ բնորոշում են ժամանակի ճաշակը և տաքենների տրամադրութիւնը, մի այլ շնորհալի մաէստրօ, ոչ պակաս զգայուն և իր ժամանակի մտքերի ոչ պակաս սիրահար, Բաշինջաղեան, անդրադարձնում էր գոյների խորատաճամուկ ելևէջներում մեր հաւատը և մեր տրամադրութիւնը...

Երբ մեր երկրի ամօթխած լուսինը սկսում է յուշիկ արծաթել Սևանի կապուտակ ջրերը և այդ ջրերը գալիս են դէպի սիրասուն եզերքը ծփելու, Զանգու և Հրազդան երկունքը լսելու, երբ մեր աշխարհի ալևոր արևը փարում, բարձրանում է ոսկեզօծելու Մասիսի գլուխը, ուր դարերի հետ միասին ննջում են հայութեան փափագը և նրա երազները, Բաշինջաղեան, որպէս արտայայտիչ մեր այդ իղձերի և տրամադրութեան, ինքնահաւատ և համոզված, սփռում է գոյների և տրամադրութիւնների մի ծիածան, որ գալիս է ծածկելու և ժամանակի աւերումներից պահպանելու մեր սիրած գոյները և նրա ելևէջներում հանգչող ժամանակի տրամադրութիւնը...

Ստեփան Զորյանեան

(Վերջը միւս անգամ)

ՉԵՐՆՈՎԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԿԱՅԱՆԻՑ

(Ուղղակի թելով)

5 նոյեմբ.

Այսօր հետևեալ նորութիւնները կարող եմ հաղորդել.

Երէկ նորից համաձայնութեան գալու հնար չեղաւ, որովհետև խորհրդակցութեանը չէին եկել բոլշեվիկների կենտ. կոմիտէի ներկայացուցիչները և գիւղացիական կենտրոնի անդամները։ Մինչև ժամը 2-ը նստելով, Սմօլնի ինստիտուտից ստանալով մի շարք անմխիթար տեղեկութիւններ, կենտ. խորհրդի անդամները և մենք՝ ընդհանուր բանակի կոմիտէի հետ միասին նիստ ունեցանք և վճռեցինք մի շարք քայլեր անել բոլշեվիկների որոշումների առիթով։

Սմօլնի ինստիտուտից ստացած մեր տեղեկութիւնները սրանք են. բան. և զին. պատ. խորհրդին ներկայացվեց տերրօրի և մամուլի հալածանքի խնդիրը։

Լէնինը անօրինակ դեմագօգիական ճառով ապացուցում էր, որ մամուլի ազատութիւնը՝ մանր բուրժուական պահանջ է և բանւորական յեղափոխութիւնը համարելով իսկական սօցիալական յեղափոխութեան սկիզբ՝ տերրօրը գտնում էր անհրաժեշտ։

Աննշան մեծամասնութեամբ ընդունվեց մամուլի ազատութիւնը վերացնելու բանաձևը։ Դէմ արտայայտվեցին ձախակողմեան սօց.-յեղափոխականները և աջակողմեան բոլշեվիկները։

Տերրօրի սիստեմը և հրովարտակների հրատարակութիւնը եղել է առանց նոր կառավարութեան կոմիսարների գիտութեան, որոնք և հրաժարական տուեցին։

Հեռացան կոմիսարներ՝ Ռիկով (ներքին գործերի), Թէօդորովիչ (պարէնաւորման) և Շլեապնիկով (աշխատանքի)։

Բողոքին միացան և Ռեազանով, Դերբիշեվ, Արբուզօվ, Իւրենև (կարմիր գվարդիայի պետ) և այլք։

Այս բանը ահագին իրարանցում առաջ բերեց բոլշեվիկների շարքերում, բայց Լէնինին և Տրօցկիին վստահութիւն յայտնելու բանաձևը անցաւ մէկ ձայնի առաւելութեամբ։

Լէնինը պահանջեց անուանական ձայնտուութիւն և տերրօրի սպառնալիքի տակ վստահութիւն ստացաւ 29 ձայնով ընդդէմ 23-ի։

Բոլշեվիկների այս դրութիւնը երկար շարունակվել չի կարող, որովհետև աջակողմեան բոլշեվիկների լիդերները՝ Ռեազանով, Կամենև և Լունաչարսկի բոլորովին համաձայն չեն Լէնինի հետ։

Պետրօգրադի բանւորութիւնը նոյնպէս սկսում է բողոքել և մի քանի ռայօնների բանւորների ներկայացուցիչները յայտնեցին, որ իրանք կը ստիպեն բոլշեվիկներին զիջումներ անել և ընդունել Վիկժէլի (Համառուս. երկաթուղ. միութ.) ծրագիրը։ Բանւորների այս տրամադրութիւնը ի նկատի առնելով դեմօկրատական խորհրդակցութիւնը երէկ բանաձև ընդունեց ընդհատված բանակցութիւնների մասին, մեղադրելով բոլշեվիկներին և առաջարկելով բանւորներին բողոքել Լէնինի և Տրօցկիի քաղաքականութեան դէմ։

Այսօր Պետրօգրադի գործարաններում կը կայանան մի շարք միտինգներ այդ առիթով։

ԿԱՐԵՒՈՐ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

5 նոյեմբերի

Երէկ Կովկասեան ճակատի կոմիսար Դօնսկօյը ուղղակի թելով խօսեց ս.-յեղ. կենտ. կոմիտէի անդամ՝ Վ. Չերնովի հետ։

Դօնսկօյի այն հարցին, թէ ինչ վիճակի մէջ է դրութիւնը, Չերնովը պատասխանեց.

Դրութիւնը այսպէս է. բոլշեվիկեան կառավարութիւնը խախտվեց. հեռացան Լունաչարսկի, Նօգին, Ռիկով, Շլեապնիկով, Ռեազանով, Թէօդորովիչ, Դերբիշեվ, Միլիւտին։ Բոլշեվիկների կենտրօնական կոմիտէից դուրս եկան նաև Կամենև, Զինօվև։ Չնչին մեծամասնութեամբ յաղթեցին Լէնին և Տրօցկի։ Տերրօրի սիստեմի պատճառով բանակցութիւնները համաձայնութեան մասին՝ նրանց հետ ընդհատվեցին. բանակցութիւններ վարվում են նրանցից հեռացածների հետ։ Անհրաժեշտ է շուտով ստեղծել հեղինակաւոր կենտրօն, որի ձեռքում կենտրօնացած լինի ռէալ ույժը, որն ստիպէր իրան հաշուի առնել։ Առաջ է քաշվում միատարր դեմօկրատական կառավարութեան պլատֆօրման այն մտքով, որ մինիստրութեան կազմի մէջ մտնեն ժող. սօցիալիստներից մինչև բոլշեվիկները։ Բացի այն անձերից, որոնք յանցանք ունեն այս արկածախնդրութիւնների և բռնութիւնների մէջ։

—

Նոյն օրը Դօնսկօյը ուղղակի թելով խօսեց և Պետրօգրադի երկրային խորհրդի անդամ Գէտկէսի հետ։

Դրութեան մասին Գէտկէս պատասխանեց.

Պետրօգրադում անիշխանութիւն չը կայ։ Ես Պետրօգրադում մասնակցում էի խորհուրդների նիստին ընդհանուր-զօրաբանակային կոմիտէի կողմից և հեռացայ մենշեվիկների հետ։ Պետրօգրադում աւերվեցին իւնկերների դպրոցները, կռիւ եղաւ հեռախօսային կայանի մօտ, երբեմն փողոցային հրացանաձգութիւն կայ, բայց անիշխանութիւն չը կայ։ Կողոպուտի և ջարդերի ամեն մի փորձ բոլշեվիկները ճնշում են անխնայ կերպով։

Մօսկվայում աւերումը սարսափելի է եղել. մնացել են օրբատեղերը. այժմ խաղաղ է։

Դօնսկօյի այն հարցին, թէ ճի՞շդ է արդեօք, որ կայանը հնազանդվել է բաղային, Գէտկէս պատասխանեց, որ այդ լուրը միանգամայն սուտ է։ Կօզակները Պետրօգրադում չէզոքութիւն են պահպանում, պատճառաբանելով այդ նրանով, որ չեն կամենում հակառակ գնալ կազմակերպված դեմօկրատիային։ Դօնի շրջանում կօզակները համաձայն են աջակցել միատարր մինիստրութեան, բայց հրաժարվում են պաշտպանել այն դէպքում, եթէ բոլշեվիկները մտնեն կառավարութեան մէջ։

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

Մօսկվայից հեռագրում են նոյեմբերի 3-ից.

Գեղեցիկ Մօսկվան, առանձնապէս նրա կենտրօնը, բաւականին վնասվեց փողոցային վերջին ընդհարումների ժամանակ։

Տվէրսկի բուլվարից սկսած մինչև Սկօբելեվի արձանը, բոլոր խանութները կոտրված են, ապրանքները կողոպտված։ Թնդանօթային կրակից վնասվեց և Մօսկվայի պատմական Կրեմլը, ուր վնասված է մեծ պալատը, Ուսպենսկի տաճարը, ամբողջ աշխարհին յայտնի Իվան Մեծի զանգակատունը և մի քանի ուրիշ շէնքեր։

Մի քանի վնասված շէնքեր կան և Տէատրալնայա հրապարակի վրա։

Այսօր համեմատաբար հանգիստ է քաղաքում, որովհետև կռւող կողմերի միջև հաշտութեան պայմանագիր է կնքված։ Բայց տրամադրութիւնը տակաւին յուզված է և քաղաքի զանազան մասերում լսվում են հրաձգութիւններ։ Էլէքտրաքարշը չի գործում։ Կայարանները բոլշեվիկների ձեռքում են։

Քաղաքի ծայրամասերը գրեթէ չեն վնասված։

—

Երէկ երկրային կենտրօնը ստացաւ մի շարք հեռագիրներ Ռուսաստանում կատարվող դէպքերի մասին։

Դրանցից քաղում ենք հետևեալ կարևոր տեղեկութիւնները.

Ֆինլանդիայում ընդհանուր գործադուլ է քաղաքական հողի վրա։ Գործադուլաւորները պահանջում են յուլիսեան սէյմի ընդունած օրէնագիծը իրականացնել։

—

Կազանում կատաղի կռիւ է տեղի ունենում բոլշեվիկների և իւնկերների միջև։ Բոլշեվիկների կողմն է գարնիզօնը։

—

Պետրօգրադում դրութիւնը խաղաղվում է. նոյնիսկ թատրոններն ու կինեմատօգրաֆներն սկսում են գործել։

—

Վօրօնէժից հաղորդում են, որ գեներալ Կալեդինը Դօնի աւազանը գրաւելուց յետոյ շարժվեց առաջ և նոյն օրը գրաւեց Վօրօնէժ քաղաքը։

ՎԵՐՋԻՆ ԱՆՑՔԵՐԸ ՊԵՏՐՕԳՐԱԴՈՒՄ

Նոյեմբ. 5 ի երեկ., Թիֆլիսի Քաղաքային Վարկի Ընկերութեան սրահում, բազմամարդ հասարակութեան առաջ, Ա. Ի. Խատիսեան, որ նոր է վերադարձել Պետրօգրադից և ականատես է եղել այնտեղի վերջին անցքերին (հոկտեմբերի 28—29-ը), պատմեց իր տպաւորութիւններն ու տեսածները բոլշեվիկեան յեղաշրջման մասին։

Նախ և առաջ ճառախօսը պատմեց այն սկզբնական տպաւորութիւնը, որ նա ստացել էր Թիֆլիսից դուրս գալուց յետոյ (հոկտեմբերի 10) երկաթուղային գնացքում։

— Սկսած Հիւս. Կովկասից ուղևորների մէջ, գլխաւորապէս ռուս հասարակութեան մէջ, նկատվում էր երկու իրար հակառակ տրամադրութիւն. աջակողմեան և ձախակողմեան։ Եւ որքան մենք աւելի էինք մօտենում Մօսկվային, այնքան աւելի էր ուժեղանում աջակողմեան հոսանքը։ Պարզ էր, որ հաս. մտքի այդ երկու հոսանքները դժգոհ էին և ելք էին որոնում դուրս գալու ստեղծված իրերի դրութիւնից։ Աջակողմեան հոսանքը պահանջում էր ուժեղ իշխանութիւն, կարգ ու կանոն, վերջ տալ անարխիային։ Ձախակողմեան հոսանքը գտնում էր, որ ներկայ կօալիցիօն մինիստրութիւնը ոչ մի խնդիր չէ լուծել, որ պատերազմին վերջ տալու մասին ոչինչ չէ արված, որ հողը գիւղացիութեան չի յանձնված և այլն։

Մօսկվայում Քաղ. Միութեան համագումարին (հոկտ. 14—19-ը), որին նա մասնակցելու էր գնացել Անդրկովկասեան ներկայացուցիչների հետ միասին, ճառախօսը նկատել է աւելի ճնշող տրամադրութիւն, չը նայելով որ մասնակցողների մեծագոյն մասը պատկանելիս է եղել յեղափոխական բանակին։ Այդ հանգամանքը աւելի որոշ արտայայտվել է այն դժգոհ բանաձևում, որը ընդունել է համագումարը կառավարութեան կարգադրութեան դէմ Քաղաք. Միութեան գործունէութիւնը լեկվիդացիայի ենթարկելու առիթով, որի կարգադրութիւնը ստացվել էր հէնց համագումարի ժամանակ։

Մինչ համագումարի մի մասը պահանջում էր խիստ կերպով բողոքել, ինչպէս կադէտները, միւս մասը, բուն յեղափոխականները, ամեն կերպ աշխատում էին բանաձևը մեղմել։

Այդ համագումարին իբրև հակապատկեր ճառախօսը պատմեց, թէ ինչպիսի տպաւորութիւն էր տիրում Քաղ. Միութիւնների նախորդ համագումարին անցեալ տարվայ դեկտեմբերին Մօսկվայում, որը ցրվեց հին կառավարութեան ժանդարմների ույժով։

Հոկտ. 19-ից մինչև 23-ը ճառախօսը Քաղ. Միութեան գործով եղել է կայանում։ Այստեղ նա էլ աւելի է համոզվել թէ ինչպիսի քաօս է տիրում թէ բանակում և թէ թիկունքում։ Օրինակ՝ զօրքի կրճատման անհրաժեշտութիւնը զգացվում էր վաղուց, բայց այդ հարցը ձգձգվեց ու լուծվեց շատ ուշացած։ Եւ դա ունեցաւ իր ծանր հետևանքները։ Մասնաւորապէս Քաղ. Միութեան փակման խնդիրը պարզվեց որ դրված է գլխաւորապէս հիւսիսային ֆրօնտի հրամանատար գէն. Չերեմիսովի պահանջով։ Այդպէս աստիճանաբար ծանօթացնելով աուդիտորիան երկրի զանազան մասերում տիրող դժգոհութեան տրամադրութիւնների հետ՝ ճառախօսը մօտեցաւ Պետրօգրադի անցքերին և ներկայացրեց նրանց՝ որպէս տրամաբանական հետևանք ստեղծված դրութեան։ Աւելի ևս Պետրօգրադում որոշ էր նկատվում ուժեղ իշխանութեան անհրաժեշտութիւնը։

Բոլշեվիկների հանդէս գալու մասին, այն էլ իր բոլոր մանրամասնութիւններով, յայտնի էր ամենքին, ինչպէս և կառավարութեանը։

Նա կարող էր միջոցներ ձեռք առնել, մանաւանդ որ իրանք բոլշեվիկները իրանց հանդէս գալու մասին տալիս էին մանրամասն բացատրութիւններ, հասցէներն անգամ։ Եւ եթէ լինէր մի ուրիշ կառավարութիւն, ուղղակի այդ հասցէներով կը կալանաւորէր ու կը խեղդէր շարժումը իր բնի մէջ։

Այդ միջոցները ձեռք չառնվեցին։ Այդ բաւական չէր, կառավարութիւնը մնաց լքված սօցիալիստական միւս կազմակերպութիւնների կողմից ևս։

— Դրա պատճառը պարզվեց աւելի հասկանալի կերպով հասարակապետութեան ժամ. խորհրդի այն նիստում, որը տեղի ունեցաւ հոկտ. 24 ի առ. ժ. 12 ից մինչև եր. ժ. 9-ը, որին դիմել էր Կերէնսկին, պահանջելով արտայայտել իրան վստահութիւն և տալ իրաւունք ճնշելու բոլշեվիկների շարժումը զէնքի ույժով։

Սօցիալիստական ճառախօսների (ոչ միայն բոլշեվիկ ներկայացուցիչներ, այլ և միւս խմբերը) [illegible] պարզվեց, որ նրանք որոշ կերպով տարբերվում են յեղափոխական կառավարութիւնը պաշտպանելուց։ Միևնոյն ժամանակ, չը կամենալով բաժանվել մասսայից, որը գնում է բոլշեվիկների լօզունգներից տարված, սօցիալիստական կուսակցութիւնները վճռական չէին այդ շարժումը ճնշելու գործում։

Կերէնսկիի ճառը այդ առիթով հէնց սկզբից բաժանեց խորհուրդը երկու մասի. մի կողմ՝ կադէտները, կօօպերատիվների խմբակը, կօզակները և Մօսկվայի ներկայացուցիչները, որոնք գտնում էին, որ ժամանակն է վերջապէս իշխանութեան ույժը երևան հանել. իսկ միւս կողմից սօցիալիստ կուսակցութիւնների ներկայացուցիչները, որոնք այդ շարժումը դատապարտելով հանդերձ կողմնակից չէին զէնքի ույժով ճնշելուն։

Այդ առիթով խորհուրդը մեծամասնութեամբ ընդունեց կօօպերատօրների և կադէտների մշակած բանաձևը։

Բայց երեկոյեան դէմ հէնց իրանք բանաձևի հեղինակները պահանջ արին վերացնել բանաձևը, որով վստահութիւն էր յայտնված Կերէնսկիին և հաւանութիւն՝ ապստամբութիւնը ճնշելու զէնքի ույժով։

Բոլշեվիկները այն միջոցին, երբ խորհուրդը շարունակում էր իր նիստը, առանց աղմուկի, ինչ-որ փորձառու կարգադրութեամբ, արդէն գրաւել էին պետ. հիմնարկութիւնների մի մասը՝ գլխաւոր փողոցների վրա։

Մինչ այդ՝ կառավարութիւնը համոզված էր, որ զօրքի մեծ մասը—իսկ Պետրօգրադի զօրքը հասնում է 60 հազարի—իր կողմն է։ Հեռախօսով նոյն ժամին սկսեցին ստացվել տեղեկութիւններ, որ զօրամասերը իրար ետևից բանաձևեր են ընդունում, որ չեն ճանաչում իշխանութիւնը և միանում են բոլշեվիկներին։

Վերջիններիս լօզունգները—հաց, հաշտութիւն և հող—չափազանց մօտ էին Պետրօգրադի թէ բանւորութեանը և թէ զինւորութեանը, որի մեծ մասը նոյն գիւղացիութիւնն է։

Բոլշեվիկների դեկրէտները հաշտութեան, հողի ու հացի մասին մասսայի կողմից համարվում էին իբրև կատարված փաստ, ու նա առանց հաշիւ տալու իրան՝ գնում էր նրանց ետևից։

Այդպիսով կառավարութեան տրամադրութեան տակ մնում էին միայն կանանց զօրամասը, 600 հոգուց բաղկացած, իւնկերները և պրապօրշչիկների դպրոցները, որոնք և եկան Ձմերային պալատը՝ կառավարութիւնը պաշտպանելու։

Վերջին մոմենտում իւնկերներն էլ վերցրին իրանց 6 թնդանօթներն ու հեռացան։

Կառավարութիւնը պաշտպանելու մնացին կանանց բատալիօնը և 120 իւնկերներ, ունենալով իրանց դէմ տասնեակ հազարանոց ամբոխ, որոնք առանց զէնքի էլ՝ իրանց ոտների տակ կարող էին տրորել այդ մի բուռը պաշտպաններին։

Իսկ ծովի կողմից «Աւրօրա» զին. նաւն էր սպառնում նրանց։

Կերէնսկին, զրկված աջակցութիւնից, աննկատելի կերպով թողել էր Պետրօգրադը և գնացել Պսկով. Պետրօգրադի գէն. նահանգապետ էր նշանակվել կադէտ մինիստր Կիշկինը։

Կառավարութիւնը օրինակելի վեհանձնութեամբ կանգնել էր իր դիրքի վրա, թէև պաշարված։

Լ. Դ.

(Կը շարունակվի)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Ստացանք Կիսլօվոդսկից, պ. Գասպար Տէր-Մարգարեանից «Մշակի» առաջիկայ տարվայ 2 օրինակի բաժանորդագին 200 րուբլի։

❋ Քաղ. դումայի իրաւասու Միք. Աթաբէկեան հրաժարվեց իրաւասութեան կոչումից։ Հայ ժող. կուսակց. նրան փոխարինում է հետևեալ թեկնածուն՝ Խաչ. Աֆրիկեանը։

◆ Բոլշեվիկների կառավարութիւնը կովկասեան ընդհանուր կոմիսար է նշանակել Ստ. Շահումեանին։

◆ Օպակօմը տեղեկութիւն ստացաւ Կարսի շրջանային կոմիսարից, որ Խորասանի շրջանի կոմիսար Բէհբութովը վստա-

Շարունակութիւնը տես 3-դ եր. 4-դ սիւնակ։

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Քաղաքացիներ, ձայն տուէք Հայ Ժողովրդական Կուսակցութեան № 7 ցուցակին:

ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԻՄՆԱԴԻՐ ԺՈՂՈՎԻ ՀԱՄԱՐ

III

Զգուշացէք խաբեբայութիւններից

Որքան որ օրէնքը զգուշութեան միջոցներ է ձեռք առնում, որ ընտրութիւնները կատարուեն կանոնաւոր, ազատ և գիտակցական կերպով, այնուամենայնիւ գտնւում են մարդիկ, որոնք ոչ մի միջոցի առաջ կանգ չեն առնում՝ իրանց կուսակցութեան կողմը որքան կարելի է շատ ձայներ գրաւելու համար: Քաղաքային ընտրութիւնների առիթով թէ Թիֆլիսի և թէ գաւառի ընտրողներ, իբրեւ անկախ, պատմում էին ամենայն տեսակի միջոցների մասին, որ այս կամ այն կուսակցութիւնը գործ էր դնում իր ձայները շատացնելու համար ի վնաս ուրիշ կուսակցութիւնների:

Ահա այս խաբեբայական և ապօրինի միջոցների դէմ է, որ զգուշացնում ենք մեր ընտրողներին:

Խաբեբաները բազմահնար են և նրանց գործ դրած միջոցները բազմատեսակ: Դժուար է մի առ մի թւել, թէ ինչ միջոցներ են գործել նրանք քաղ. ընտրութիւնների ժամանակ և ինչ միջոցների պիտի դիմեն այժմ: Ընդհանրապէս պէտք է ասել, որ այդ խաբեբաները իրանց որսերը փնտռում են ընտրողների այն խաւերի մէջ, որոնք անտեղեակ են օրէնքին ու ընտրական կանոններին. այսպիսիների վրա խաբեբաներն ազդում են կամ իբրև իշխանաւորներ՝ հրամանի կամ սպառնալիքի ձևով, կամ իբրև ժողովրդի բարեկամներ՝ զանազան բարիքների խոստումներով:

Քաղաքային ընտրութիւնների ժամանակ՝ ընտրողների բնակարանները տանում և բաժանում էին անուանական վկայականներ և ծրարներ ամեն մի ընտրողի մի մի հատ: Ընտրողներն էլ վաղօրօք իրանց հաւանած ցուցակը դնում էին ծրարների մէջ ու փակում:

Յանկարծ մի տուն մտնում են մի կամ երկու անծանօթ մարդ. հրամայում են բերել փակած ծրարները. հարցնում են թէ ինչ ցուցակ են դրել ծրարների մէջ: Երբ տեսնում են, որ իրանց ցուցակը չէ, ծրարը և միջի ցուցակը պատառում են և նոր ծրարներ են տալիս՝ իրանց ցուցակներով և հրամայում են անպատճառ այդ ծրարը տալ քուէարկութեան ժամանակ: Պատրաստ ծրարներ, ընտրական կոմիսիայի կնիքով կնքված, լիքն են նրանց ծոցերում: Ինչ ճանապարհով և որտեղից են ստացվել այդ աւելորդ դրօշմաւոր ցուցակները, յայտնի չէ: Եթէ ընտրողը իր ծրարի մէջ դեռ ցուցակ չէ դրել, կամ դրել, բայց դեռ չէ փակել, դրված օտար ցուցակը հանում են և իրանցը դնում, ծրարը փակում և պատուիրում, որ այդ ծրարը տանի:

Նոյն իսկ ընտրութեան օրերը ընտրական վայրը գնալու ճանապարհին կանգնած են լինում շարքերով այդպիսի խաբեբաներ և ընտրողներից ում որ խելքերը կտրում է՝ կանգնեցնում են և նոյն գործողութիւնը փողոցում կատարում:

Առաջիկայ ընտրութեան ժամանակ՝ ծրարները տները չեն ուղարկվելու, ինչպէս եղաւ քաղաքային ընտրութիւնների ժամանակ, այլ ընտրողները ծրարն ստանալու են հէնց ընտրութեան համար նշանակված շինութեան մէջ, որտեղ ոչ մի ագիտատորի կամ միջամտութիւն թոյլ չէ տրվում: Ուրեմն կարելի է յուսալ, որ [illegible] ծրարների միջոցով կեղծումներ կատարելու առաջն առնված է այս անգամ:

Բայց կան խաբեբայութեան ուրիշ ձևեր: Մտնում են, օրինակ, որևէ կուսակցութեան ագիտատորները մի տուն և յայտարարում են, թէ եկել են ցուցակագրելու ընտանիքի անդամներին: Ընտանիքի գլխաւորը—սովորաբար անտեղեակ մարդ—կարծում է, թէ եկողները որևէ իշխանութեան կողմից են ուղարկված. այժմ մանաւանդ այնքան «խորհուրդներ» կան, ամեն մէկը իրան իրաւատու համարող, որ տեղեակ մարդիկն էլ շփոթվում են: Ագիտատորները ցուցակագրում են տան անդամներին, բաժանում են իրանց կուսակցական ցուցակները և յայտարարում. «Մենք ձեզ արդէն ցուցակագրեցինք, դուք պարտաւոր էք մեզ ձայն տալ՝ այս ցուցակով»: Եւ խեղճ ընտրողը կարծում է, թէ արդէն իրան ցուցակագրել են և բանը վերջացած է, որ ինքը պարտաւորաբար պէտք է ձայն տայ իրան ցուցակագրող կուսակցութեան: Ի հարկէ, սա խաբեբայութիւն է: Ոչ մի կուսակցութիւն իրաւունք չունի իր գլխի ցուցակագրելու ժողովուրդը, և ոչ մի ցուցակագրութիւն ոչ մի պարտականութիւն չէ դնում ընտրողի վրա: Այդ միևնոյնը կը լինէր, եթէ մէկը մտնէր մի տուն, տան եղած-չեղածը ցուցակագրէր և ապա ասէր՝ «ես այս իրերը ցուցակագրեցի, ուրեմն սրանք իմն են դառնում»:

Закавказскій Избирательный Округъ

Անդրկովկասեան Ընտրական Շրջան

Голосую за списокъ № 7 Армянской Народной Партіи	Ձայն եմ տալիս Հայ Ժողովրդական Կուսակցութեան № 7 ցուցակին
1. ПАПАДЖАНОВЪ, Михаилъ Ивановичъ	1. ՊԱՊԱՋԱՆԵԱՆ, Միքայէլ Յովհաննէսեան
2. АРУТЮНЯНЪ, Самсонъ Степановичъ	2. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ, Սամսոն Ստեփանեան
3. ТЕРЪ-ПЕТРОСЯНЪ, Кегамъ Маркаровичъ	3. ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ, Գեղամ Մարգարեան
4. АМИРОВЪ, Исаакъ Томасовичъ	4. ԱՄԻՐԵԱՆ, Իսահակ Թովմասեան
5. ВАЧЬЯНЦЪ, Аствацатуръ Георгіевичъ	5. ՎԱՉԵԱՆՑ, Աստուածատուր Գէորգեան
6. АТАБЕКОВЪ, Михаилъ Нерсесовичъ	6. ԱԹԱԲԵԿԵԱՆ, Միքայէլ Ներսէսեան
7. АЙВАЗЯНЪ, Арутюнъ Гавриловичъ	7. ԱՅՎԱԶԵԱՆ, Յարութիւն Գաբրիէլեան
8. СПЕНДІАРОВЪ, Иванъ Семеновичъ	8 ՍՊԵՆԴԻԱՐԵԱՆ, Յովհաննէս Սիմէօնեան
9. СТЕПАНОВЪ, Герасимъ Никитичъ	9. ՍՏԵՓԱՆԵԱՆ, Կարապետ Մկրտչեան
10. ЗАХАРЬЯНЪ, Татеосъ Артемьевичъ	10. ԶԱՔԱՐԵԱՆ, Թադէոս Յարութիւնեան
11. БУНЯТЯНЪ, Менторъ Абрамовичъ	11. ԲՈՒՆԻԱԹԵԱՆ, Մենտոր Աբրահամեան
12. ХОДЖАЯНЪ, Ованесъ Никитичъ	12. ԽՈՋԱԵԱՆ, Յովհաննէս Մկրտչեան
13. МЕЛИКЯНЦЪ, Ованесъ Нахапетовичъ.	13. ՄԵԼԻՔԵԱՆ, Յովհաննէս Նահապետեան
14. МЕЛИКЪ-ШАХНАЗАРЯНЪ, Герасимъ Исааковичъ	14. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ, Կարապետ Իսահակեան

Ոչ մի ընտրող պարտաւոր չէ ձայն տալ այս կամ այն ցուցակին այն պատճառով, որ իրան ցուցակագրել է այդ ցուցակը տարածող կուսակցութիւնը. ընտրողը լիակատար ազատ է ձայն տալ այն ցուցակին, որին ինքը համակրում է, որի մէջ նշանակված թեկնածուները ամենից արժանաւորներն են Հիմնադիր Ժողովի համար:

Կան խաբեբայութեան ուրիշ ձևեր ևս, խոստումներ և սպառնալիքներ: Խոստումներն այս տեսակ են լինում, որ ագիտատորները հաւատացնում են միամիտ ընտրողին, որ եթէ նա ձայն տայ իրանց ցուցակին՝ կը ստանայ ամսական այնքան փութ շաքար, ինչ թւանշան որ կրում է իրանց ցուցակը. կը ստանայ այսքան սպիտակ ալիւր, այսքան հաց, նրա որդիները կազատվեն զինուորական ծառայութիւնից և այլն. վերջապէս այն բարիքները, որ խեղճ ընտրողը երազում է: Ի հարկէ, այս բոլոր խոստումները սուտ են և խաբեբայութիւն: Այս կամ այն ցուցակին ձայն տալով ընտրողի ոչ շաքարը կաւելանայ, ոչ հացը, ոչ էլ որդին զինուորութիւնից կազատվի:

Սրա հակառակն էլ են անում. Մտնում են տները, առաջարկում իրանց ցուցակներն ու յայտարարում. մեր կուսակցութիւնը ամենազօրեղն է. բոլոր կօօպերատիւի խանութները մեր ձեռքերին են. եթէ դուք ձայն չը տաք այս մեր ցուցակին, մենք ձեր անունները կը գրենք ու կը զրկենք հացից էլ, շաքարից էլ: Որքան անգութ, անխիղճ պէտք է լինեն այն «հասարակական գործիչները», որոնք այսպիսի աններելի միջոցներով—յայտնապէս սուտ խոստումներով և անտեղի սպառնալիքներով—շահագործում են տգէտ ընտրողի տնտեսական նեղութիւնը: Եւ այսպիսի ստորին ձևի բռնութիւններ գործ են դնում ընտրողի կամքի վրա այն մարդիկ, որոնք խօսում ու բղաւում են ազատութեան անունից:

Օրէնքը ոչ միայն արգելում է որևէ տեսակի խաբեբայութիւն, խոստում կամ սպառնալիք, այլ և խստութեամբ պատժում է այն մարդկանց, որոնք ձայներ որսալու համար այսպիսի միջոցների են դիմում:

Ընտրական օրէնքի առաջին բաժանմունքի իններորդ գլուխը նուիրված է «Ընտրութիւնների ազատութեան և կանոնաւորութեան»: Այս գլխում մի առ մի թւած են, թէ ինչ յանցանքներ ընտրութիւնների ժամանակ ինչ չափով պատժելի են: Այս գլխից հարկ ենք համարում դնել այստեղ երկու յօդուած…

Յօդ. 104. «Ով որ անձի վրա բռնութիւն գործ դնելով, պատժի արժանի սպառնալիքով, խաբեբայութեամբ, իր իշխանութիւնը կամ ընտրողի տնտեսական կախումը ի չար գործ դնելով արգելք լինի ընտրողական իրաւունք ունեցող անձին ազատութեամբ իր ընտրողական իրաւունքն իրագործել՝ այսպիսի յանցանքի համար ենթարկվում է բանտարկութեան»:

Յօդ. 108. «Ով որ խոստումներով կամ նիւթական կամ անձնական շահ առաջարկելով ընտրողին կամ նրա ընտանիքին՝ աշխատի ընտրողին ետ կանգնեցնել ընտրութեան մասնակցելուց, կամ նրան թելադրէ որոշ կերպով քուէարկել՝ այսպիսի յանցանքի համար ենթարկվում է բանտարկութեան»:

Տեսնում էք ուրեմն, ընթերցող, որ մեր յիշած խաբեբաները ոչ միայն իրաւունք չունեն ձեզ ցուցակագրելու և պատուէրներ տալու, ոչ միայն չեն կարող իրագործել իրանց խոստումներն ու սպառնալիքները, այլև այդ տեսակ բաներ անելու և ասելու համար ենթարկվում են բանտարկութեան: Բաւական է, որ դուք այսպիսի սուտ խաբեբաների մասին գանգատ ներկայացնէք նահանգական [illegible] ցոյց տալով նաև վկայ՝ եթէ կայ:

Ոչ ոքի դուք պարտական չէք հաշիւ տալու, թէ ում էք կամենում ձայն տալ, ոչ ոքի պարտական չէք ցոյց տալու ձեր ընտրած ցուցակը. ոչ ոք չի կարող ձեզ վնասել կամ օգուտ բերել՝ այս կամ այն ցուցակին ձայն տալու դէպքում: Իբրև ընտրող՝ դուք պատասխանատու էք միայն ձեր խղճի առաջ, և ցուցակների մէջ ընտրութիւն անելիս՝ դուք պէտք է ղեկավարվէք ձեր գիտակցութեամբ:

Ա. Զ. Դ.

Որևէ տեղեկութիւն ընտրութիւնների մասին, նոյնպէս և ընտրական ցուցակներ ու կուսակցութեան ծրագիրը կարելի է ստանալ կուսակցութեան կենտր. կոմիտէի և Թիֆլիսի կոմիտէի բիւրօյում, Գոլովինսկի № 25:

Բիւրօն բաց է առաւօտեան 10—2 ժամը և ճաշից յետոյ 6—9 ժամը: Նոյն տեղում կարելի է և անդամագրվել:

Հ. Ժ. Կ. Խմբագր. Մասնաժողով

…նել է 30,603 ր. 92 կ., որից 30,000 ր. եղել է [illegible] պանդուխտների ընտանիքների նըպաստ ու Բէյրութից [illegible] է:

Քաղաքային թաղային մի քանի կոմիտէների ծառայողները պարենաւորման [illegible] վարչութեանը ներկայացրել են կտրուկ պահանջներ՝ ռոճիկները աւելացնելու մասին:

Հայկական երաժշտական ձեմարանում արդէն սկսվել են պարապմունքները. առ այժմ բացված են հետևեալ դասարանները՝ դաշնամուրի, ջութակի, [illegible] թէօրիայի և խմբավարական: Բոլոր դասարանների համար ընդունելութիւնները շարունակվում են:

Չորեքշաբթի, նոյեմբերի 8-ին, Թիֆլիսի երաժշտական դահլիճում Վրթ. Փափազեանը պիտի խօսի «Թիւրքահայ գրականութիւնը մինչև 90 ական թւականները» նիւթի մասին:

Մեզ հաղորդում են, որ շուտով վերսկսելու է հանգուցեալ Սեդրակ Թառայեանի «Ընկեր» թերթի հրատարակութիւնը նրա դստեր՝ Վարդուհի Թառայեանի խմբագրութեամբ:

Ստացանք Ա. Տէր-Գրիգորեանից 20 րուբլի, որից 10 ր. յօգուտ Գետաշէն գիւղի ծխական դպրոցի, իսկ 10 ր. յօգուտ նոյն գիւղի Աւագ ս. Նշանի ուխտատեղիի վերանորոգութեան:

Ստացանք «Քայլեր» հասարակ.-գրական աշակերտական ամսագրի № 5—6, էջ 32, գինն է 55 կ.:

ՀԱՅԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

ԼՈՒՐԵՐ ԹՈՒՐՔԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԲԵԿՈՐՆԵՐԻՑ

Ժընեւից վերջերս Պօրտ-Սայիդ մի հայ բողոքականի ուղարկված նամակից հետևեալ հետաքրքրական լուրերն է քաղել Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում հրատարակվող «Արև» թերթը:

Կարգ մը միսիոնարներ հոս հասան Թիւրքիայէն, որոնց մէջ են նաև միսիս Մէրիլ, միսիս Լէսլի, միս Ֆորմէն և այլն՝ Խարբերդէն, Մերսինէն, Իզմիրէն, Թալասէն:

Ահա անոնցմէ քաղած լուրերս:

ԽԱՐԲԵՐԴ.—Խարբերդ 7-էն 10,000 հայ կայ տեղւոյն, սակայն սովը անոնց կը սպառնայ:

Ցանուած արտ չկայ, նոյն իսկ բանակը ուտեստի սաստիկ նեղութիւն ունի ու դասալիքներու թիւը օրէ-օր կը շատնայ: Թիւրք կառավարութիւնը թիւրք ժողովրդին ցորեն կամ հաց կը բաժնէ որոշ չափով մը [illegible] և այդ ալ չի կրնար երկար տևել: Խարբերդի մէջ միայն երեք պատուելիներ կային՝ Ամիրխանեան, Եղոյեան և ուրիշ մը, գերման շրջանակին մէջ: Քոլէջի պրոֆեսորներէն միայն մէկ հոգի կայ՝ պրոֆ. Խաչատուրեան և ուսուցիչներէն մէկ հոգի. միւս բոլորը մեռցուած են. պրոֆ. Լիւլէճեան Թիֆլիս մնաց, պրոֆ. Թաղիկեանն ալ [illegible] հիւանդութեան: Հազարաւոր հայեր կրցած են Ռուսիա անցնիլ քիւրտերու միջոցաւ, հոսանքը կը շարունակուի տակաւին:

ՄԱԼԱԹԻԱ.—Մալաթիոյ բողոքական հասարակութիւնէն միայն երեք հոգի կային: Գրեթէ ամբողջ քաղաքը իսլամացած է. նոյնպէս և Արաբկիր:

ՍԵԲԱՍՏԻԱ.—Սեբաստիա բնիկ սեբաստացի շատ քիչ կայ. կան սակայն թիւով հայ զինուորներ ու թշուառութիւնը մեծ է: Դոկտ. Գ. Սիւնին իր կնոջ հետ ողջ են և Սեբաստիայէն եկողները տեսած են: Կառավարութիւնը մեծ ջանքեր կընէ թիւրք մուհաջիրներ Էնկիւրի և Կոնիա փոխադրելու:

ՄԱՐԶՈՒԱՆ.—Մարզուանի միսիոնարներէն 4—5 հոգի կը մնան ու իրենց գործը կը շարունակեն: Աղջկանց դպրոցը կանոնաւոր կերպով բացուած է ու նոյնիսկ ամավերջի հանդէս եղած՝ որու մէջ տեղին բժշկապետը ճառ մը խօսած է ու տեղակալը դիպլօմաները բաժնած:

Գրած էր արդէն թէ Սեբաստիոյ զուիցերական որբանոցը տակաւին կը մնայ և որբերու թիւը կրկնապատկուած է:

ԱՅՆԹԱՊ.—Այնթապի հայութիւնը գրեթէ ամբողջովին աքսորուած է: [illegible] հարուստներու մէկ մասը մեռցուած են:

Գարամանուկեան գերդաստանէն 1—2 հոգի միայն կային, Քիւրքճեանները Սէլիմիէ են, նոյնպէս՝ Եուսուֆ էֆ. Գարասմեան իր ընտանիքով, Յովհ. էֆ. Պաշալեան և այլն:

Լալէեան տեղ մը կ'ապրի, բայց չեմ գիտեր թէ ուր: Միսիրեան և քանի մը [illegible] հայեր գործաւոր զինուոր են: Փանոսը կոլէջն է, ուր հաւաքած են երկու տեղափոխուած պաշտօնակիցներ՝ Յարութիւնեան և Աբրահամեան: Պրոֆ. Լ. Լևոնեան Այնթապ է, պրոֆ. Ք. Պալիկեան և Հայրապետեան Դէր-էլ Զօր, պրոֆ. Ք. Պալեօզեան, Տաղլեան և Իսվէզեան՝ Հալէպ թիւրք դպրոցի մը մէջ դաս կուտան: Պրոֆ. Մալթաւեան մեռած է: Դոկտ. Յ. Պէզճեան կ'ապրի:

ՍԷԼԻՄԻԷ.--Սէլիմիէ բաւական թուով հայեր կան. պատ. Նօխուտեան Համա ողջ է: Հալէպի հայութիւնը մօտ 30,000-ի կը հասնի: Պատ. Սիսակ հոն ողջ է: Դոկտ. Ալթունեան լաւ է. գործ կը տանի:

ՔԻԼԻՍ.—Քիլիս բան չէ եղած: Պատ. Շիրաճեան հոն կ'ապրի և 200 որբով որբանոց մը կը վարէ: Այնթապի այդչափ դէշ բաղդ մը վիճակուելուն պատճառը կայմակամը եղեր է, որ Վանի դէպքերէն յետոյ հոն ղրկուած է. ինք վանեցի է:

Այնթապի միւս պատուելիներուն մասին չեմ յիշեր թէ ինչ եղած են. մեռած են, բայց չեմ գիտեր թէ ինչպէս. Զէյթունցիներն ալ Դէր-էլ-Զօր մեռցուած են:

ՈՒՐՖԱ.—Ուրֆայի մէջ կայ հայութիւն մը, որուն թիւը օրէ-օր կը շատնայ. [illegible] բանակին համար քարտուղար է եղեր, փախեր, բռնուեր և ազատուեր է: Այնթապ մնացած են դոկտ. Մէրիլ, դոկտ. Համիլթըն, օր. Ֆր[illegible] և ուրիշ մը: Որբանոցը տակաւին կը շարունակէ:

ՄԱՐԱՇ.—Մարաշի աղջկանց կոլէջը առանց ընդհատումի իր ընթացքը շարունակած է ցարդ: Ժողովուրդէն մաս մը տակաւին հոն կ'ապրին: Կիլիկիոյ մէջ գրեթէ իսլամացող չկայ:

ԿԵԱՆՔԸ ԳԱՒԱՌՈՒՄ

ԴԷՊՔԵՐԸ ԲԱԳՈՒՈՒՄ

Բէգզադեանը հեռախօսում է Բագուից, որ քաղաքում հանգստութիւն է տիրում: Բոլշեվիկները հանդէս չեն գալու: Բանակցութիւններ են վարվում:

Այստեղ կազմվել է հանրային ապահովութեան կոմիտէ: Հոկտ. 25-ին կայացաւ խորհրդակցութիւն բոլոր դեմօկրատական յեղափոխական կազմակերպութիւնների ներկայացուցիչներից, ուր քննվեց այն հարցը, թէ անհրաժեշտ է կազմակերպել գերագոյն յեղափոխական օրգան Բագու քաղաքի համար: Այդ օրգանը սկզբունքով որոշվեց կազմել, որովհետև թւլացած է յարաբերութիւնը Ժամ. Կառավարութեան հետ և կարող են հակա-յեղափոխական յարձակումներ կատարվել: Այդպիսի օրգան կազմելու համար, երկրորդ օրը, հոկտ. 26-ին գումարվեց երկրորդ խորհրդակցութիւն դեմօկրատական, յեղափոխական և պրոֆեսիոնալ կազմակերպութիւնների ներկայացուցիչներից: Այդ խորհրդակցութիւնը որոշեց կազմակերպել հանրային ապահովութեան կոմիտէ, կազմված քաղ. և գիւղ. պատգամաւորների խորհրդի գործադիր մարմնի 3 ներկայացուցիչներից և յիշեալ կազմակերպութիւնների մի-մի ներկայացուցիչներից: Այդ կոմիտէն, որ կոչվում է «Բագուի հանրային ապահովութեան յեղափոխական կոմիտէ», ծրագիրը հաստատվեց քաղ. և գիւղ. պատգամաւորների խորհրդի կողմից: Կոմիտէն կազմեց իր նախագահութիւնը բաղկացած 4 անդամներից—Դ[illegible] (սոց.-յեղ.), Ս. Բէգզադեան (սոց.-յեղ.), Ստ. Շահումեան (բոլշևիկ) և Բօբրօվսկի (մենշևիկ): Նոր կազմված յեղափոխական օրգանը նպատակ ունի սահմանել ամուր յեղափոխական կարգ Բագուի շրջանում և պաշտպանել յեղափոխութեան նուաճումները, ինչպէս և կօնտրօլ հաստատել բոլոր պետական և հասարակական հիմնարկութիւնների վրա:

ՂԱՐԱԲԱՂԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Այն, որի մասին այնքան դառն գուշակութիւններ էին անում, որի շուտափոյթ գալուստը բոլորս նախազգում ու սոսկում էինք, արդէն հասել ու կատարվում է: Տնտեսական ծանր ճգնաժամը հասել է [illegible]: Յուսահատական, յուզումնալից և անակնկալներով լի շրջան ենք ապրում: Տնտեսական մթերքների բացակայութիւնը, մանաւանդ ցորենի, ալիւրի, կաշիի և գարու պակասութիւնը մարդկանց համբերութիւնը սպառել, յուսահատութիւնը խորացրել է:

Եթէ մի բոպէ պատկերացնենք տիրող սովալի դրութիւնը, ապա մեզ համար պարզ կը լինեն ժողովրդի յուզմունքի պատճառները:

Ցորենի պուդը 34—37 րուբ., կորեկի և գարու պուդը 24—26 ր.:

Զթի մասին, որի արժէքը 3 ր. է, և այլ ապրանքների ու մթերքների, ինչպէս օրինակ բրնձի (ֆունտը 1. 20 կ.), գետնախնձորի (պուդը 10—14. ր.), և այլն դեռ չեմ խօսում: Վերցնում ենք առ այժմ հացը, որը մարդկային կենսական անհրաժեշտ պայման է. [illegible] է [illegible] պուդը 34—37 ր. հաց գնել:

Ամիսներ շարունակ խօսեցինք, գրեցինք, զանազան միջոցների մասին խորհեցինք և սակայն չը կարողացանք չարիքը կանխել: Հասանք այն օրը, որ սոված ամբոխը

ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐ
հարկաւոր են լաւ վարձատր. ծախելու համար մեծ մաս վճարով Գեղ. [illegible] ձեռնտու պայմաններով: Елисаветполь, Коммерч. ящ. лит. А.

(Ն.) 1347 3—1

վայրենի խնատինկաններով լցված՝ դուրս է գալիս փողոց և «հա՛ց, հա՛ց» աղաղակելով պահանջում է ոչնչացնել ամեն ինչ, կարծելով թէ դրանով յագուրդ կը տայ իր քաղցած փորին և կը գտնի իր ուզածը: Նման փորձեր արդէն տեղի են ունենում: Ղարաբաղում կարծես առաջնութեան պատիւը Խանքենդին է պատկանում, այդ՝ երկրորդ Արշակաւանին, ուր ժողովրդի տականքները, միացած տեղական մելիքեանների և մի քանի զինուորների հետ, ենթարկվել են ժողովրդի բարեկամ ձևացող դեմագոգների ազդեցութեանը և խայտառակ էքսպերիմենտներ են կատարում: Թէ ինչի՞ են ձգտում այդ ամբոխավար-դեմագոգները, ինչ է նրանց իսկական նպատակն ու [illegible], դա այժմ մենք թողնում ենք: Ժամանակին դրանց դիմակը եա կը պատռվի:

Այժմ մեզ պէտք զբաղեցնի միայն մի էական հարց. ինչպէս վերացնել հացի տագնապը:

Հիւսիսային Կովկասից շատ քիչ քանակութեամբ են ցորեն, ալիւր բաց թողնում: Զիվանշիրի գաւառից՝ ուր մեծ քանակութեամբ ցորեն կայ՝ տեղական գործ. մարմինները արգելում են ցորեն արտահանել, առուշադրիր թողնելով նոյն իսկ պարենաւորման գործի լիազօր Բէկի կողմից այդ մասին եղած կարգադրութիւնը:

Միւս կողմից՝ զանազան սպեկուլեանտ-լիազօրներ ժողովրդի անունով ձեռք բերած ցորենը անամօթաբար թաքցնում են:

Ցորեն ունեցողներին յորդոր կարդալ, որ բարեխիղճ գներով ցորեն ծախեն, ի զուր կը լինի:

Մնում է այն միջոցը, որը ներկայ դէպքում, ինչպէս շատերի կողմից է շեշտվել, ամենաանհրաժեշտն է: Այդ միջոցը ռեկվիզիցիան է, որ պէտք կատարվի կազմակերպված ձևով և օրէնքի ոյժով:

Պէտք է ռեկվիզիցիայի ենթարկել ոչ միայն ցորենն ու ալիւրը, այլև բոլոր տեսակի մթերքներն ու ապրանքները, որովհետև որոշված գնով ցորեն տուող գիւղացին կամ կալուածատէրը պէտք է հնարաւորութիւն ունենայ նոյնպէս նշանակված գնով ուրիշ ապրանք առնելու:

Դժբաղդաբար այն կազմակերպութիւնները ու մարմինները, որոնք կոչված են այդ բոլորը իրականացնելու, բացարձակ անզօր են հանդիսանում: Դարերով ստրկութեան մէջ ապրած ժողովուրդը, որ սովոր է ամեն ինչ կնուտի ոյժով անելու, այժմ եւ կնուտի է սպասում, այլապէս նա ոչինչ չի ճանաչում և հասարակական կազմակերպութիւններն ու ներկայ յեղափոխական մարմիններն արժէքազուրկ են նրա աչքում:

Ցաւալի է ի հարկէ, բայց այդպէս է:

Ակամայից պէտք է կիրառել այնպիսի խիստ միջոցներ, որ հնարաւոր լինի դէմ կանգնել տնտեսական տագնապից առաջ գալիք չարիքներին, չարիքներ, որոնք անդունդ պիտի փորեն ձեռք բերված քաղաքական ազատութեան համար և մեզ նետեն դէպի կատարեալ դժոխք:

Կրկնում եմ, ցաւալի է, որ խիստ միջոցներ են պահանջվում:

Բայց... ուրիշ ելք չը կայ:

Շուշի Դիտող

ՄԱՄՈՒԼ

ՌՈՒՍ ՄԱՄՈՒԼ

Ռուս մամուլի օրգանները հետևեալ կարծիքն են յայտնում բօլշևիկների կատարած պետական յեղաշրջման մասին:

Թիֆլիս քաղաքի բանւ. զինւ. և գիւղ. պատգ. խորհրդի օրգանը գրում է.

Պատմութիւնը կրկնվում է:

Բանւ. և զինւ. պատգ. խորհուրդների համագումարը, որ բացվեց Պետրոգրադում, իր բացման օրն իսկ իրան գտաւ կատարված իրողութեան հանդէպ. Կերենսկիի կառավարութիւնը տապալված է և իշխանութիւնը յափշտակված բօլշևիկների ձեռքով:

Բացի դրանից՝ համագումարին առաջարկվեց ընդունել առանց վիճաբանութիւնների իշխանութեան վերակազման և քաղաքական ծրագրի հիմնական կանոնները, որոնք արդէն հրատարակված են զինուորական յեղափոխական կոմիտէի կոչի մէջ:

Հետևաբար, համագումարի ամբողջ դերը կայանում էր հասարակ քուէատարի դերի մէջ, որ պէտք է միայն կնիք դրոշմէր Պետրոգրադի խորհրդի որոշումներին:

Ուստի երբ բօլշևիկները առաջարկեցին մենշևիկ-ինտերնացիօնալիստներին և սոց.-յեղափոխականներին մտնել կառավարութեան կազմի մէջ, դրանք վճռապէս մերժեցին, և կառավարչական իշխանութիւնը Պետրոգրադում ամբողջովին անցաւ բօլշևիկների ձեռքը:

Բօլշևիկների կուսակցութիւնը ռուսական պրօլետարիատի ծայրայեղ ձախակողմեան մասի կուսակցութիւնն է: Եւ բօլշևիկների իշխանութիւնը նշանակում է պրօլետարիատի իշխանութիւնը կամ բանւորական դասակարգի մի մասի դիկտատուրան: Բայց թող լինի նա նոյն իսկ ամբողջ ռուսական պրօլետարիատի դիկտատուրան: Գործի էութիւնը դրանից չի փոխվի: Ուրեմն կատարվեց այն, որի մասին մենք շարունակ նախազգուշացնում էինք և ասում, թէ «ամբողջ իշխանութիւնը խորհուրդներին» լօզունգը եթէ իրագործվի, անխուսափելի առաջ կը բերի պրօլետարիատի դիկտատուրան: Այժմ դէպքերը հաստատեցին այդ:

Մարքսը և սոց.-դեմօկրատիայի այլ պարագլուխներն և ուսուցիչները կապում են սօցիալիզմի իրագործումը բանւորական դիկտատուրայի անհրաժեշտութեան հետ: Բայց նոյն Մարքսը և պարագլուխները որոշակի ասում են նաև, թէ այդ հնարաւոր է միայն այն ժամանակ, երբ կապիտալիզմը կը հասնի իր ծայրայեղ զարգացման: Այժմ հարցվում է. հասունացե՞լ է արդեօք Ռուսաստանը այնքան, որ անցնի սօցիալիզմին: Արդեօք կապիտալը հասե՞լ է մեր մէջ զարգացման այն աստիճանին, երբ մասնաւոր սեփականութիւնը արտադրութեան գործիքների վրա կարելի լինի փոխարինել հասարակական սեփականութեամբ և յանձնել ֆաբրիկները և գործարանները բանւորների ձեռքը: Այդ հարցերին ամեն մի մարքսիստ պէտք է բացասական պատասխան տայ: Ոստում գործել պատմական զարգացման պողպատեայ օրէնքների վրայով չէ կարող ոչ մի երկիր, ոչ մի պետութիւն: Ռուսաստանում 4 միլիօն պրօլետարիատ կայ. կարող է նա իր կամքը, իր տակտիկան և ծրագիրը փաթաթել ոյժով միացած 166 միլիօն ազգաբնակութեան շլնքին, որ մեծացել և կրկնվել է մասնաւոր տնտեսութեան սկզբունքով: Պատմութիւնը. այն է ֆրանսիական յեղափոխութեան պատմութիւնը, ցոյց է տալիս, որ հնարաւոր է: Յեղաշրջումների սուր րօպէներում պրօլետարիատը իբրև ամենից շատ յեղափոխականը և կազմակերպվածը, կարող է յափշտակել իշխանութիւնը և թելադրել ամբողջ ժողովրդին իր կամքը, բայց ֆրանսիական յեղափոխութեան պատմութիւնը ասում է, որ դրանից յետոյ ամբողջ երկիրը, բոլորովին անպատրաստ սօցիալիստական յեղաշրջման, շուռ է գալիս պրօլետարիատից, դուրս է գալիս նրա դէմ և հասցնելով նրան պարտութեան՝ թաղում է միևնոյն ժամանակ և ամբողջ յեղափոխութիւնը: Այս պատմութիւնը կրկնվում է: Եւ միևնոյն Կարլ Մարքսը ասել է. առաջին անգամ մեծ պատմական դէպքը դրամա է, երկրորդ անգամ՝ կօմեդիա:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բարանա (Ղազախի գաւ.), 3 նոյեմբ.

«Մշակի» № 230-ի գաւառական կեանքի բաժնում Ֆօրտէրը Ղալաչայից գրել էր փոքրիկ մի տեղեկութիւն, որտեղ գրված է ի միջի այլոց, թէ մեր հասարակութեան բանկը քաօսային դրութեան մէջ է, բանկից գողացվել է 1500 ր., բանկի նախագահը հեռացել է պաշտօնից, բանկի փողերի գործադրողը հասարակութեան կոմիսարն է, որը ելքի մուտքի տարբերութիւնը չէ հասկանում: Վերջինները հաշուապահի գործն է, որը նոյնպէս պաշտօնից հրաժարվել է:

Ֆօրտէրը չէ բացատրում մեզ, թէ ո՞վ է հասարակական բանկը քաօսային դրութեան մէջ ձգել կամ ո՞վ է 1500 ր. գողացել և երբ: Նախ 1500 ր. գողացվել է բանկի հին կառավարութեան ժամանակ և, որ գլխաւորն է, գողացվել է ոչ թէ բանկից, այլ բանկի նախկին նախագահի ջէբից, որ կապ չունի բոլորովին բանկի հետ. այդ բանը որոշվեց վերջին ընդհ. ժողովում, որտեղ ներկայ էր մանր վարկային ընկերութեան ինստրուկտորը պետ. բանկի կողմից հոկտեմբերին և ուր եւ ընտրվեցի նախագահ, իսկ հաշուապահ՝ պ. Երալեան:

Բանկի նախագահը և հաշուապահ հրաժարվել են,—գրում է Ֆօրտէրը. ի հարկէ կը հրաժարվէին, քանի որ բանկը մատնված էր անգործունէութեան և դադարեցված էր ելք և մուտքը, այնպէս որ վերջին ընդհ. ժողովում նոր վարչութիւնը հին վարչութիւնից ընդունեց մի դատարկ սընդուկ 20,000 ր. պարտքով:

Նոր վարչութիւնը, հասարակութեան շահերը ի նկատի ունենալով, բանկի կառավարութիւնը իր վրա վերցրեց, որ չը քայքայվի այդ խոշոր և օգտաւէտ հաս. հիմնարկութիւնը, թէպէտ նրա համար շատ ծանր է նրան նորից ոտքի կանգնեցնելու գործը:

«Բանկի փողերը գործադրում է հասարակութեան կոմիսարը, որը ելքի և մուտքի տարբերութիւնը չէ հասկանում»:

Երբ և ինչի՞ համար է գործադրել բանկի փողերը հասարակութեան կոմիսարը, այդ բանի մասին պարզ չէ արտայայտվում Ֆօրտէրը:

Արդեօք ի՞նչ հիմքեր ունի Ֆօրտէրը, որ գրում է, թէ հաս. կոմիսարը ելքի և մուտքի տարբերութիւնը չի հասկանում: Գիտէ՞ արդեօք նա և ե՞րբ է քննել հաս. կոմիսարի հաշուապահական ընդունակութիւնները:

Բարանայի կոմիսար՝
Յով. Աստուածատրեան

Խմբագիր-հրատարակիչ՝
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՌԱՔԵԼԵԱՆ

ԿՈՂՄՆԱԿԻ ՀԱՂՈՐԴԱԳՐ.

Համադանի «Երիտասարդ գրադարանի» վարչութիւնը գալիս է սրանով յայտնելու իր խորին շնորհակալութիւնը հետևեալ յարգելի պարոններին և հաստատութիւններին, որոնք հաճել են իրանց նուիրաբերութիւններովը քաջալերել մեր վերաշինված գրադարանին:

Պր. Տիգրան Աճէմեան նուիրել 1 օր. «Ցայգեր և դէպքեր», Ա. Աւետիսեան 1 օր. «Համբաւաբեր», Նոր-Ջուղայի «Երկունք» գրադարանից 1 օր. «Մի գիւղացու պատմութիւն», 1 օր. «Վիտօշի Բաղէն», 1 օր. «Ներգաղթածը», 1 օր. «Կանոնադրութիւն Հ. Յ. Դ.», 1 օր. «Մէջլիսի շովրայէ մելլի», 1 օր. «Մարկ Բոցարիս» և 1 օր. «Ուռանող» և 1 օր. «Կանոնադրութիւն Հ. Յ. Դ.» պարսկերէն լեզուով:

Սամուէլ Նահապետեանից 1 օր. «Հայր Բաբին», Սանդրօ-խան Դիլ-ֆիշենից 1 օր. «The New American Citizen», 1 օր. Լերմօնտովի «Դեւը», 1 օր. «Քաղ. կաքաղանները»:

Կարապետ Թոփալեանից 1 օր. «Thriller», Բարսեղ-խան Բաբայեանից 1 օր. «Կայծ Ս. Դ. Հնչ. Կուսակցութեան գործունէութիւնից», 1 օր. «Կատահութիւն, ապահովութիւն և վայելք»:

Օր. Սալվի Մարտիրոսեանից 1 օր. «Վըտակ», Յովհաննէս Ահարոնեանից 1 օր. «Հորիզոն» մէկ տարով, Աղասաշէս Մարտիրոսեանից 1 օր. «Բարի լոյս», տիկ. Շուշան Յովսէփեանից 1 օր. «Անտանց զաւակները», տ. Եղիսաբէթ Եղիայեանից, 1 օր. «Ազատութեան արշալոյսին», օր. Վիկտորիա Աւետիսեանից 1 օր. «Գերմանիա» և Աւետիս Աւետիսեանից 1 օր. «Անգլերէն»:

Ի դիմաց Համադանի «Երիտասարդ գրադարանի» վարչութեան՝

Նախագահ՝ Վահան Ղազարեան
Քարտուղար՝ Պօղոս Մարտիրոսեան

1339 1—1

—

Համադանի «Երիտասարդ գրադարանի» վարչութիւնը սրանով գալիս է իր խորին շնորհակալութիւնը յայտնելու հետևեալ անձանց, որ իրանց կանխիկ նուէրներովը օգնեցին վերաշինել գրադարանի հաստատումը:

Պ. պ. Սիմոն Սիմոնեան 50 դրան, Սանդրօ խան Գելեֆեան 50 դրան, Արշակ Մուժիկ 50 դրան, Տէր-Գրիգորեան 20 ր., Աւետիս Եղիայեան 30 ր., Սիմոն Յովհաննէսեան 20 ր., Ե. Դաւթեան 20 ր., Համբարձում 25 ր., Աւագով և Բօբայեան 50 ր., Սարգիս Սարգիսեան 25 ր., Սեդրակ Իսկէնդէրեան 25 դր., Հայկազ Յ. Գույումճեան 40 դր., Յ. Յովհաննէսեան 30 դր., Մ. Մարտիրոսեան 40 ր., Արշամ 25 ր., Մ. Խորիկեան 20 ր., Կ. Հայրապետեան 10 դր., Սեդրակ Խաչատուրեան 20 ր., ՈՒ 20 ր., Մինաս Ղազարեան 25 ր., ՈՒ 20 դր., Եփրեմ Մասուկեան 15 ր., Բօղիկ 10 ր., Միհրան Ջոհրաբեան 30 դր., Սեդրակ Յովսէփեան 20 ր., Էլիաս Միրզաբէգեան 4 դր. և 6 ր., Յովհաննէս Եղիայեան 15 ր., Թորգոմ Մեսրոբեան 10 ր., Յակոբ Դաւթեան 5 ր., գեր. Խորէն վ. Տէր-Վարդանեան 50 դր., Աւետիս Տէր-Գրիգորեան 100 դր., Կարապետ Աստուածատուրեան 10 ր., Սամսոն Դաւթեան 10 ր., Յակոբ Թումասեան 10 ր., տ. Վարդուհի Հ. Մարտիրոսեան 25 ր., ՈՒ 10 ր., օր. Նուարդ և Լուսընթաց 25 ր., Կարապետ Թովմասեան 12 ր., Աբգար Եղիայեան 25 ր., Վ. Շահնազարեան 25 ր., Միմ. Յովսէփեան 20 դր., Գէորգ Խանբաբայեան 15 դր., Եղիա Եղիայեան 20 ր., Իվան 10 դր., Յ. Ս. Թունեան 25 ր., Մերոն 20 ր.:

Ընդհանուր գումարն է մինչև 1917 թ. սեպտեմբերի 10-ը 534 դրան և 638 րուբլի:

Ի դիմաց Համադանի «Երիտասարդ գրադարանի» վարչութեան

Նախագահ՝ Վահան Ղազարեան
Քարտուղար՝ Պօղոս Մարտիրոսեան

1340. 1—1

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606» ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.

ԲԺԻՇԿՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութիւն և վեներական (սիֆիլիս) հիւանդութիւններ:
Բ. Գ. ԱՂԱՄԱՐԵԱՆ—10 կէսից—12 կէս ժ. ներքին, ջղային և երեխայոց հիւանդութիւն և ծաղկահատ:
Մ. Գ. ԱԻՆՑԻՍԵԱՆ—11 կէսից—1 կէս ժ. մորթի ն. վիրաբուժութիւն և վեներական (սիֆիլիս) հիւ.
Ս. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւանդութիւններ:

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Ն. ԽՈՒՃԱԿԵԱՆ—6—7 ժ. կանանց հ. և վիրաբուժական.
Հճարը 50 կ.: Ջրաբերները ձրի: Համախորհրդի (կօնսիլիումի և օպերացիայի) համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ Մ. ՋՄՇԿԵԱՆԻ 1918 Թ. ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ.
Տարօրինակ գուշակութեամբ
(ե. կ.) 1282. 10—6

ՍՐՏԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ,

ճարպակալումը, սրտի սկլէրօզը, սրտի բաբախումը և թանչոցը, նևրաստենիան և ջղային հիւանդութիւնները, սեռական թուլութիւնը, պառաւութիւնը, հիւծուածութիւնն ու նիհարութիւնը մեծ աջողութեամբ բժշկում է Սպերմին-Պէլը, որի մասին վկայում են աշխարհիս ամենայայտնի բժիշկների բազմաթիւ դիտողութիւնները գրականութեան մէջ:

Սպերմին-Պէլը միակ իսկական, բազմակողմանի փորձված Սպերմինն է. այդ պատճառով էլ պէտք է ուշադրութիւն դարձնել „ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻ" անուան վրա և չը կընել կեղծվածները, հեղուկներ և սերմային գեղձերից պատրաստված մաղլամներ, որպէս անպէտք նմանողութիւններ, որոնք թէ յատկութեամբ և թէ ներգործութեամբ Սպերմին-Պէլի հետ ոչինչ առնչութիւն չունեն և յաճախ պարունակում են առողջութեան համար վնասակար տարրեր:

Ցանկացողներին ուղարկվում է ձրիաբար «Цѣлебное дѣйствіе Спермина» գիրքը. ամբողջ օրգանոտերապիայով հետաքրքրվողներին ուղարկվում է՝ 4 հատ 7-կոպէկանոց նամականիշ ստանալուց յետոյ՝ նոր լոյս տեսած «Цѣлительныя силы организма» գիրքը:

Սպերմին-Պէլին կայ ամենուրեք:

(№ 1) 0—11

Профессоръ Д-ръ ПЕЛЬ и С-вья
С.-Петроградъ.

„ՄՇԱԿԻ" խմբագրատանը
Վաճառվում են
ՅՕԳՈՒՏ ՀԱՅ ԱՐԿԱԾԵԱԼՆԵՐԻ
Հետեւեալ հրատարակութիւնները

1) «Հացի կտոր զէյթունցուն», յօգուտ Զէյթունի հայ սովեալների 2 ր.
2) «Շէքսպիր եւ իր «Համլէտ» ողբերգութեան աղբիւրն ու քննադատութիւնները», Պ. Աղամեան . . 1 ր.
3) «Երկասիրութիւնների առաջին կապուկ», Քամալեանց Ս.-ի . . 50 կ.

Վերադիր վճարով պատուէր չէ ընդունվում:
Ծանրոցական ծախսը պատուիրողի վրա:
1. 0—15

ՇՈՒՇԱՆԻԿ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ
ԿՈՂՈՎԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ
ԴՊՐՈՑՈՒՄ

Սկսվել են պարապմունքները: [illegible] պատճառով կողովագործութեան և այլ արհեստներ սովորողների թիւը շատ սահմանափակ է: Տրվում են դասեր դպրոցական նկարչութեան հայ և առանձնապէս արհեստական դպրոցներում պաշտօնավարել ցանկացողներին: Դիմել՝ Норашенскій пер. № 10 школа Карзиноплетенія Ш. Манукяна, ամեն օր 6—7 ժամը երեկոյեան:
1337 1—1

Բնակարանային Հաշտարար Ատեանների

ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Քաղաքացիներ. Բնակարանային օրէնքի համաձայն, օգոստոսի 5-ից 1917 թ. Թիֆլիսի քաղաքային դուման կարգադրեց կազմել Թիֆլիսում 6 բնակարանային հաշտարար ատեաններ՝ մի մի ատեան ամեն մի 2 միլից. քաղաքամասում:

Նախագահների և նրանց փոխանորդների ընտրութիւնները օրէնքը թողնում է քաղաքային դումային:

Այդ հիման վրա Թիֆլիսի քաղաքային դուման իր նիստում հոկտեմբերի 16-ին ընտրեց ատեանների 6 նախագահ և նրանց փոխանորդ:

Ատեանի կազմը երկու կողմից հաւասար է, այսինքն բնակարանավարձողները և բնակարանատէրերն ընտրում են միատեսակ թւով իրանց ներկայացուցիչներին:

Ամեն մի 6 ատեանում պէտք է ընտրվեն 24 անդամ. 12—բնակարանավարձներից և 12 բնակարանատէրերից:

Ընտրութիւններին մասնակցում են և օգտվում են բոլոր քաղաքացիները երկու սեռի, որոնց տրված է ընտրական իրաւունք քաղաքային ընտրութիւնների ժամանակ:

Ամեն մի 2 սահմանակից միլից. քաղաքամասում հրաւիրվում է մի-մի ժողով՝ բնակարանատէրերի, բնակարանավարձների և սենեակավարձների համար:

Բոլոր ժողովները նշանակված են կիրակի օրը նոյեմբերի 5-ին ժ. 11-ին առաւ.:

Տնատէրերի ժողովների տեղերը.

1—2	քաղաքամաս՝	Արտիստական Ընկերութիւն
5—8	»	Աւետարանական դպրոց (փող. 19 փետրվարի)
6—7	»	5-րդ արական գիմնազիա (Պետրօպաւլեան փող.)
11—12	»	Մուշտայիդի ժողովարան

Բնակարանավարձների և սենեակավարձների ժողովների տեղերը.

2—3	քաղաքամաս՝	III-րդ արական գիմնազիա (Լերմօնտովեան փող.)
5—8	«	Արհեստաւորաց դպրոց (Էլդարեան հրապարակ)
6—7	»	Հաւլաբարի ժողովարան (Կախեթեան հրապարակ)
11—12	»	Նադզալադեվի թատրոնում:

Ժողովները հաշվում են օրինաւոր, ինչ թւով էլ ներկայ լինեն ժողովականները:

1331 3—3 ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ПРИ НЕВРАСТЕНІИ
ТУБЕРКУЛЕЗѢ, ПОДАГРѢ, РЕВМАТИЗМѢ, МАЛОКРОВІИ,

истеріи, невралгіи, старческой дряхлости, артеріосклерозѣ, діабетѣ, головныхъ боляхъ, безсонницѣ, половомъ безсиліи, хроническомъ разстройствѣ питанія и сердечн. дѣятельн., общей слабости, послѣ инфлуэнцы, сифилиса, родовъ, операцій, кровопотерь - во всѣхъ случаяхъ, требующихъ УДАЛЕНІЯ изъ организма МОЧЕВОЙ КИСЛОТЫ,

СЪ УСПѢХОМЪ ПРИМѢНЯЕТСЯ ВЫТЯЖКА ИЗЪ СѢМЕННЫХЪ ЖЕЛЕЗЪ
(СЕКАРОВСКАЯ ЖИДКОСТЬ)
Органотерапевтической лабораторіи Д. КАЛЕНИЧЕНКО
Свыше 4,000 профес. и врач., около 1,000 госп., лаз. и больницъ.
СРЕДИ НИХЪ ЧИСЛЯТСЯ:

ПРОФЕССОРА:
В. Штанге—Петроградъ.
А. Шилтовъ—Харьковъ.
С. Зимницкій—Казань.
С. Гогитидзе—Одесса.
Виноградовъ-Петроградъ.

ГОСПИТАЛИ и ЛАЗАРЕТЫ:
1) Госпиталь № 2 Всерос. Союза Городовъ—Кіевъ.
2) Госпиталь № 12 Красн. Креста—Симферополь.
3) Лазаретъ № 240 Ком. Всер. С. Гор.—Петроградъ.
4) Госпиталь № 1 Всер. Земск. С.—Екатеринославъ.
5) Морской госпиталь — Кронштадтъ.
6) Лиман. лечебн. Красн. Креста—Одесса.

ПРЕДОСТЕРЕЖЕНІЕ.

Вытяжка изъ сѣменныхъ железъ лабораторіи Д. Калениченко изготовляется естественнымъ путемъ безъ огня и химическихъ реакцій и ничего общаго не имѣетъ съ химически изготовленнымъ сперминомъ равно какъ и съ другими подражаніями (напр, съ вытяжк. лаборат. „Галенъ"). МЕДИЦИНСКІЙ СОВѢТЪ ПРИЗНАЛЪ, что ВЫТЯЖКА ИЗЪ СѢМЕННЫХЪ ЖЕЛЕЗЪ, приготовленная по способу Броунъ-Секара, не только не содержитъ вредныхъ для здоровья веществъ, а МНОГИМИ ВРАЧАМИ СЧИТАЕТСЯ БОЛѢЕ ДѢЙСТВИТЕЛЬНОЙ И БОЛѢЕ ПОЛЕЗНОЙ, НЕЖЕЛИ СПЕРМИНЪ. (Журн. постан. Мед. Сов. № 597, 18 авг. 1915 г.)

Г.г. Врачамъ вытяжка для наблюденій высылается gratis. Обширная литература высылается безплатно. Одинъ флаконъ сѣменной вытяжки лаборат. Д. Калениченко въ продажѣ 5 р. 25 К. Пересылка 1—2 флак. (можно и налож. платеж.) 40 коп., пересылка свыше двухъ флак.—за счетъ лабораторіи, 2% почтов. сборъ за налож. плат. за счетъ заказчика.

АЛКОГОЛЬНАЯ вытяжка лабораторіи Д. Калениченко продается въ аптекахъ и аптекарскихъ магазинахъ всей Россіи. Адресъ: Органотерапевтическая лабораторія Д. Калениченко Москва, Мясницкая, Козловскій пер. соб. домъ № 10 (во дворѣ) кв. 211 Телеграфный адресъ: Москва, Калефлюидъ.

(7, 14, 21, 28)

Контора Лабораторіи Д. Калениченко доводитъ до свѣдѣнія почтен. заказчиковъ что, въ виду повышенія почт. тарифа, пересылка отъ 1—6 флаконовъ относится за счетъ заказчика и лишь при заказѣ не менѣе 6 флаконовъ—за счетъ лабораторіи (1-й поясъ до 12 ф.—2 руб., 2-й поясъ—4 р., 3-й поясъ—6 р.). 2%-ный почт. сборъ за наложеніе платежа всегда за счетъ заказчика.

Заказъ исполняется по полученіи задатка не менѣе 5 р. (остальное можно налож. плат.)

Типографія „ЭКОНОМІЯ" Тифлисъ